

# ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2018

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

#### Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:


Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Նկարում պատկերված է.

- 1) հարթավայր
- 2) գոգավորություն
- 3) բլուր
- 4) լեռնահովիտ



2 Ո՞ր ժամային գոտին է արևելյան երկայնության  $22^{\circ}30'$  և  $37^{\circ}30'$  միջօրեականների միջև.

- 1) երրորդ
- 2) զրոյական կամ 24-րդ
- 3) առաջին
- 4) երկրորդ

3 Հասարակածի վրա տեղակայված երկու քաղաքների հեռավորությունը 11250 կմ է, իսկ քարտեզում՝ 45 սմ: Քարտեզի մասշտաբը կլինի.

- 1) 1 : 4 000 000
- 2) 1 : 2 500 000
- 3) 1 : 25 000 000
- 4) 1 : 40 000 000

4 Երկրի օրական պտույտի հետևանք է.

- 1) նյութերի համաշխարհային շրջապտույտը քարոլորտում
- 2) ծովային հոսանքների ուղղության շեղումը նախնական ուղղությունից
- 3) տարվա եղանակների հերթափոխը
- 4) տաք օդի վեր բարձրանալը

5 Մթնոլորտային ճնշումը կախված է.

- 1) տեղումների տեսակից
- 2) վայրի բացարձակ բարձրությունից
- 3) ամպամածությունից
- 4) վայրի բուսածածկույթից

6 Որն է տարածքի տեղումների տարեկան քանակը կախված չէ.

- 1) ծովային հոսանքների տեսակից
- 2) գերիշխող քամիների ուղղությունից
- 3) օվկիանոսների և ծովերի նկատմամբ վայրի ունեցած հեռավորությունից
- 4) օվկիանոսի ջրի աղիությունից

7 Արեգակի շուրջը պտտվելիս Երկիրը ուղեծրի հեռակետում լինում է.


- 1) հուլիսի 5-ին
- 2) սեպտեմբերի 23-ին
- 3) հունվարի 3-ին
- 4) մարտի 21-ին

8 Մեծ Արարատ լեռան գագաթին մթնոլորտային ճնշումը 320 մմ ս. ս. է: Նույն պահին ճնշումը Արարատյան դաշտում (ծովի մակարդակից մոտ 850 մ բարձրության վրա) կլինի.

- 1) 760 մմ
- 2) 670 մմ
- 3) 431 մմ
- 4) 751 մմ


9 Նկարում պատկերված է.

- 1) գծային մասշտաբ
- 2) երկաթուղի
- 3) թվային մասշտաբ
- 4) նավթամուղ



10 Ո՞ր կլիմայական մարզում է Բ բնակավայրը.

- 1) արևադարձային չոր
- 2) մերձարևադարձային չոր
- 3) մերձարևադարձային միջերկրածովային
- 4) արևադարձային խոնավ



11

**Ո՞ր ծովածոցերն են արևադարձային գոտում.**

- 1) Բիսկայան և Բոտնիկական
- 2) Կալիֆոռնիական և Պարսից
- 3) Կարպենտարիա և Մեծ Ավստրալական
- 4) Սիամի և Բենգալական

12

**Բարեխառն ծովային կլիման բնորոշ է.**

- 1) Ավստրալիայի ծայր հարավարևմտյան մասին
- 2) Պատագոնիայի արևելյան առափնյա շրջաններին
- 3) Հյուսիսային Ամերիկայի բարեխառն գոտու արևմտյան և արևելյան մասերին
- 4) Ուրալյան լեռներից արևելք ընկած շրջաններին

13

**Բնութագրումով որոշել բնական զոնան.**

*Այդ բնական զոնայում ձմեռը ցուրտ է, ամառը՝ տաք: Տեղումների տարեկան քանակը 400–500 մմ է: Գերակշռում է խոտային բուսականությունը: Ո՞րն է այդ բնական զոնան.*

- 1) տունդրան
- 2) սավաննան
- 3) տափաստանը
- 4) անապատը

14

**Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Երկրի մագնիսական և աշխարհագրական բևեռները, հետևաբար նաև աշխարհագրական և մագնիսական միջօրեականները համընկնում են:
- 2) Գնդաձևության շնորհիվ նույն պահին Երկրի մակերևույթի տարբեր լայնություններում Արեգակի ճառագայթներն ընկնում են տարբեր անկյան տակ:
- 3) Երկրի ձգողության ուժի հետևանքով ծանր նյութերն իջել են ներքև, թեթևները՝ բարձրացել:
- 4) Երկրի ձգողական մեծ ուժի շնորհիվ օդը, մարմինները չեն հեռանում նրանից:

15

**Հյուսիսային Ամերիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Մայրցամաքի հարավում՝ արևադարձային ծովամերձ շրջաններում, պասսատների ազդեցությամբ թափվում են մինչև 2500–4000 մմ տեղումներ:
- 2) Մայրցամաքի կենտրոնական մասում ձմռանը ձևավորվում է ցածր ճնշման մարզ:
- 3) Ամենաբարձր ջերմաստիճանը (+57°C) գրանցվել է Մահվան հովտում:
- 4) Մայրցամաքի արևելյան հարթավայրային շրջաններում արևելքից արևմուտք տեղումների քանակը նվազում է:

16

**«Գետ – վտակներ» գույգերից ո՞րն է սխալ.**

- 1) Գանգես – Բրահմապուտրա, Ինդոս
- 2) Շատ-Էլ-Արաբ – Եփրատ, Տիգրիս
- 3) Կուր – Արաքս, Ախուրյան
- 4) Վոլգա – Օկա, Կամա

17

**«Հարթավայր – աշխարհամաս» գույգից ընտրել սխալը.**

- 1) Հյուսիս-Գերմանական – Եվրոպա
- 2) Լենքորանի – Եվրոպա
- 3) Միջագետքի – Ասիա
- 4) Դեկանի – Ասիա

18


**«Նեղուց – հարակից աշխարհագրական օբյեկտ» գույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Բասսի – Թասմանիա կղզի
- 2) Բասսի – Քեյփ Յորք թերակղզի
- 3) Թորեսի – Առնհեմլենդ թերակղզի
- 4) Կուկի – Նոր Գվինեա կղզի

19

Քարտեզում Գ տառով նշված օվկիանոսային հոսանքն է նշված.

- 1) Բրազիլական
- 2) Պերուական
- 3) Ֆոլկլենդյան
- 4) Գվիանական



20

Քարտեզում Ը տառով նշված մայրաքաղաքն է նշված.

- 1) Ասունսիոն
- 2) Լա Պաս
- 3) Կարակաս
- 4) Բրազիլիա

21

Երկրի օրական պտույտի հետևանքով առաջանում է.

- 1) Երկրի մագնիսական բևեռների տեղափոխություն
- 2) շարժվող մարմինների շեղում նախնական ուղղությունից
- 3) տարվա եղանակների հերթափոխ
- 4) Երկրի առանցքի ուղղության շեղում

22

**Աֆրիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Հասարակածային կլիմայական գոտում տեղումներն առավելապես թափվում են ձմռանը:
- 2) Մայրցամաքի ծայր հյուսիսային և հարավային շրջանները մերձարևադարձային գոտիներում են:
- 3) Հասարակածային կլիմայական գոտում ջերմաստիճանների տատանումների տարեկան լայնույթը ընդամենը  $10^{\circ}$ – $12^{\circ}$  է:
- 4) Ձմռանը մերձարևադարձային գոտիներում տիրապետում են արևադարձային օդային զանգվածները:

23

**Հունիսի 22-ին հարավային կիսագնդի ցանկացած վայրի համար ճառագայթների անկման անկյունը ո՞ր բանաձևով է հաշվարկվում.**

- 1)  $\alpha = 90^{\circ} + \varphi$
- 2)  $\alpha = 90^{\circ} - (\varphi + 23,5^{\circ})$
- 3)  $\alpha = 90^{\circ} - (\varphi - 23,5^{\circ})$
- 4)  $\alpha = 90^{\circ} - \varphi$

24


**Հարավային Եվրոպա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Տարածաշրջանի ամենազարգացած երկրներն են Իտալիան և Իսպանիան:
- 2) Ժողովուրդների մեծամասնության լեզուները պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքի գերմանական լեզվախմբին:
- 3) Աչքի է ընկնում բնակչության բարձր բնական աճով:
- 4) Տարածաշրջանի բոլոր երկրները հանրապետություններ են:

25

**Քարտեզում 3 թվով նշված են այն տարածքները, որտեղ.**

- 1) անմարդաբնակ են
- 2) կանանց թվաքանակը գերազանցում է տղամարդկանց թվաքանակին
- 3) տղամարդկանց թվաքանակը գերազանցում է կանանց թվաքանակին
- 4) կանանց և տղամարդկանց թվաքանակները հավասար են



26

Ո՞ր տիպի քաղաքներին են բնորոշ անսովոր խիտ և ցածրահարկ կառուցապատումը և բարեկարգման ցածր մակարդակը.

- 1) եվրոպական
- 2) լատինամերիկյան
- 3) ամերիկյան
- 4) ասիական

27

Քաղաքային ազլումերացիաների ընդարձակման և միաձուլման հետևանքով ձևավորված ավելի հզոր ու ընդարձակ ուրբանիզացված գոտին կոչվում է.

- 1) տրանսպորտային հանգույց
- 2) տեխնոպոլիս
- 3) ուրբանիզացիա
- 4) մեգալոպոլիս

28

Բնութագրումով որոշել պետությունը.

*Տարածքի մեծությամբ աշխարհի 7-րդ պետությունն է: Ըստ պետական կառուցվածքի՝ դաշնային հանրապետություն է: Աշխարհի առավել բազմազգ ու բազմալեզու պետություններից է: Այս պետությունն առաջատարներից է թեյի, մանգոյի և ադամաթզի բերքով: Ո՞րն է այդ պետությունը.*

- 1) Իրանը
- 2) Հնդկաստանը
- 3) Կանադան
- 4) Ինդոնեզիան

29

Քաղաքի բնակչության թիվը 128,000 է, բնական աճի գործակիցը՝ 24 %: Մեկ տարվա ընթացքում երկիր է եկել 5485 մարդ, մեկնել՝ 3780 մարդ: Երկրի բնակչության թիվը մեկ տարի հետո կկազմի.

- 1) 132777 մարդ
- 2) 131072 մարդ
- 3) 1323780 մարդ
- 4) 1325485 մարդ



30

**Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Բնակչության թվի աճի տեմպերը բարձր են վերարտադրության երկրորդ տիպի երկրներում:
- 2) Բնակչության ցածր բնական աճը բնորոշ է զարգացած երկրներին:
- 3) Բնակչության մահացության ամենաբարձր ցուցանիշները բնորոշ են աֆրիկյան երկրներին:
- 4) Բնակչության վերարտադրության առաջին տիպին են պատկանում Ասիայի և Աֆրիկայի զարգացող երկրները:

31

**Միայն մեկ երկրի հետ պետական սահման ունեն.**

- 1) Մոնղոլիան և Ալբանիան
- 2) Իսպանիան և Նորվեգիան
- 3) Պորտուգալիան և Կանադան
- 4) Չիլին և Մեքսիկան

32

**Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Ջրաէլեկտրակայանները հիմնականում կառուցվում են հարթավայրային գետերի վրա:
- 2) Աէկներն ապահովում են աշխարհում արտադրվող էլեկտրաէներգիայի կեսից ավելին:
- 3) Ծանր գունավոր մետաղների ձուլումը կողմնորոշվում է դեպի հումքի բազաները:
- 4) Պողպատի ձուլման ձեռնարկությունները կառուցվում են գիտական կենտրոնների մոտ:

33

**Թուրքական լեզվախմբի ժողովուրդներ չեն.**

- 1) դազախները և ուզբեկները
- 2) տաջիկները և պարսիկները
- 3) թուրքմենները և թուրքերը
- 4) դրդըզները և ադրբեջանցիները

34

**Գյուղատնտեսական հողահանդակ չէ.**

- 1) անտառը
- 2) վարելահողը
- 3) արոտավայրը
- 4) խոտհարքը

35

**Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Արեգակնային էներգիայի օգտագործումը մեծ է հատկապես բարեխառն գոտու խոնավ շրջաններում:
- 2) Կրթությունը, գիտությունը, մշակույթը ոչ արտադրական ոլորտի ճյուղերից են:
- 3) Ներկայումս համաշխարհային էներգետիկան իր զարգացման աճիսային փուլում է:
- 4) Համաշխարհային էլեկտրաէներգիայի կառուցվածքում առաջատարը ջրաէներգետիկան է:

36

**Իրանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Գյուղատնտեսության առաջատար ճյուղն անասնապահությունն է:
- 2) Երկիրը հարուստ է ջրային և անտառային ռեսուրսներով:
- 3) Հարավկասպիական դաշտավայրը երկրի ամենաչորային շրջանն է:
- 4) Երկրի կենտրոնական շրջաններում գյուղատնտեսության հիմքը ոռոգովի երկրագործությունն է:

37

**Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Գյուղատնտեսական արտադրության մեջ լավ է արտահայտված սեզոնայնությունը:
- 2) Բնակլիմայական պայմանների ազդեցությունը գյուղատնտեսության զարգացման և տարածքային կազմակերպման վրա աննշան է:
- 3) Գյուղատնտեսությունն, ի տարբերություն արդյունաբերության, ունի տարածքային համատարած տեղաբաշխում:
- 4) Գյուղատնտեսության գլխավոր արտադրության միջոցը հողն է:

38

**Տրանսպորտային ցանցի զծային կոնֆիգուրացիան բնորոշ է.**

- 1) ԱՄՆ-ին և Չինաստանին
- 2) Կուբային և Չիլիին
- 3) Կանադային և Ռուսաստանին
- 4) Արգենտինային և Բրազիլիային

39

**Դեպի ծով ելք չունեն.**

- 1) Ռումինիա և Ուկրաինա
- 2) Ավստրիա և Չեխիա
- 3) Բելգիա և Բուլղարիա
- 4) Ալժիր և Պերու

40

**«Ջրանցք – պետություն» գույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Քիլի – Գերմանիա
- 2) Սուեզի – Իսրայել
- 3) Պանամայի – Կոլումբիա
- 4) Կորնթոսի – Ֆրանսիա

41

**Եվրոպա աշխարհամասի այս տարածաշրջանը հարուստ է անտառային և ջրային ռեսուրսներով: Տարածաշրջանի երկրները բնութագրվում են բնակչության ցածր բնական աճով, իսկ կյանքի միջին տևողությամբ աշխարհի առաջատարներից են: Հավատացյալ բնակչության հիմնական մասը քրիստոնյա բողոքականներ են: Ո՞րն է այդ տարածաշրջանը.**

- 1) Արևմտյան Եվրոպան
- 2) Հյուսիսային Եվրոպան
- 3) Արևելյան Եվրոպան
- 4) Հարավային Եվրոպան

42

**Գերմանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է:
- 2) Բնակչության թվով Եվրոպայում երկրորդն է՝ Ֆրանսիայից հետո:
- 3) Բնակչության բնական աճի ցուցանիշը բարձր է:
- 4) Տնտեսությունը արդյունաբերական (ինդուստրիալ) զարգացման փուլում է:

43

**Ո՞ր շարքի միջլեռնային զոգավորություններն են տրված ըստ բարձրությունների աճման.**

- 1) Դերջանի, Երզնկայի, Կամախի
- 2) Մշո, Մանազկերտի, Ալաշկերտի
- 3) Մշո, Բալահովտի, Խարբերդի
- 4) Երզնկայի, Կարնո, Աշկալայի

44

**«Լճային զոգավորություն – ծագում» գույգերից ընտրել սխալը.**

- 1) Փարվանա – մնացորդային
- 2) Ուրմիա – տեկտոնական
- 3) Վանա – տեկտոնահրաբխային
- 4) Քարի – սառցադաշտային

45

**Հայկական լեռնաշխարհի կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Արեգակի ճառագայթների անկման անկյունը դեկտեմբերին կազմում է  $72^{\circ}$ – $77^{\circ}$ :
- 2) Ամենատաք ամիսը մայիսն է:
- 3) Կլիման պայմանավորող գլխավոր գործոնը մթնոլորտի տեղական շրջանառությունն է:
- 4) Օդի առավելագույն ջերմաստիճանը  $+46^{\circ}\text{C}$  է:

46

**Մեծամորի ակեր միջին հաշվով տարեկան արտադրում է ՀՀ-ում արտադրվող 7,5 մլրդ կՎտ•ժ էլեկտրաէներգիայի 29 %-ը: Տարեկան որքա՞ն էլեկտրաէներգիա է արտադրում Մեծամորի ակերը.**

- 1) 82 մլն կՎտ•ժ
- 2) 2175 մլն կՎտ•ժ
- 3) 820 մլն կՎտ•ժ
- 4) 2,87 մլն կՎտ•ժ

47

**Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) ՀՀ բուսաբուծության մասնագիտացման կարևոր ուղղություններից է այգեգործությունը:
- 2) Չորացման շնորհիվ ՀՀ լեռնամարգագետնային հողերը դարձել են մշակովի:
- 3) ՀՀ-ում ոչխարաբուծությունը մասնագիտանում է մսակաթնաբրդատու ուղղությամբ:
- 4) ՀՀ-ում հացահատիկ մշակում են 500–2200 մ բարձրություններում:

48

**Տավուշի մարզի հյուսիսի ցածրադիր հովիտներում կլիման.**

- 1) չոր և խիստ ցամաքային է
- 2) չոր մերձարևադարձային է
- 3) բարեխառն լեռնային է
- 4) չափավոր ցամաքային է

49


**Ո՞ր լանդշաֆտն է գերակշռում Շիրակի մարզում.**

- 1) լեռնատափաստանային
- 2) կիսաանապատային
- 3) անտառային
- 4) ալպյան և մերձալպյան

50

Արարատի մարզում բնապահպանական հիմնախնդիր չէ.

- 1) հողերի աղակալումը
- 2) արտեզյան ավազանների աղտոտումը
- 3) բացարձակ ոռոգման գոտի լինելու հանգամանքը
- 4) ցեմենտի արտադրման ժամանակ փոշու և այլ թափոնների առկայությունը



51

Քարտեզում Դ տառով ո՞ր թերակղզին է նշված.

- 1) Բալկանյան
- 2) Փոքր Ասիա
- 3) Պիրենեյան
- 4) Ապենինյան

52

Քարտեզում Ե տառով ո՞ր պետությունն է նշված.

- 1) Ավստրիա
- 2) Նիդերլանդներ
- 3) Բելգիա
- 4) Շվեյցարիա

53 **Քաղցրահամ ջրի պաշարներով սակավ ապահովված երկրներ են.**

- 1) Իրանը և Ավստրալիան
- 2) Բրազիլիան և Ինդոնեզիան
- 3) Ռուսաստանը և Չինաստանը
- 4) Կանադան և ԱՄՆ-ը

54 **«Ջերմոցային էֆեկտը» պայմանավորված է.**

- 1) մթնոլորտում ջրային գոլորշու և ածխաթթու գազի քանակի ավելացմամբ
- 2) Արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթների ինտենսիվությամբ
- 3) սառցադաշտերի հալմամբ
- 4) մթնոլորտի շրջանառությամբ

55 **Ո՞ր բույսերն են որպես հումք օգտագործվում արդյունաբերության տարբեր ճյուղերում.**

- 1) տեխնիկական
- 2) կերային
- 3) դեկորատիվ
- 4) դեղաբույսերը

56 **Գրել այն հրաբուխների համարները, որոնք Աֆրիկայում են.**

- |              |                |
|--------------|----------------|
| 1. Կամերուն  | 5. Դեմավենդ    |
| 2. Հեկլա     | 6. Կիլիմանջարո |
| 3. Ռուիս     | 7. Օրիսաբա     |
| 4. Կրակատաու | 8. Էրեբուս     |

57 **Գրել Մեծ Անտիլյան կղզեխմբին պատկանող կղզիների համարները.**

- |                |                 |
|----------------|-----------------|
| 1. Հաիթի       | 5. Պուերտո-Ռիկո |
| 2. Կուբա       | 6. Վանկուվեր    |
| 3. Ֆոլկլենդյան | 7. Ճամայկա      |
| 4. Հրո երկիր   | 8. Վիկտորիա     |

58

**Գրել այն ապարների համարները, որոնք ունեն հրային ծագում.**

- |                    |           |
|--------------------|-----------|
| 1. այրվող թերթաքար | 5. խարամ  |
| 2. մարմար          | 6. բազալտ |
| 3. գնեյս           | 7. կրաքար |
| 4. տուֆ            | 8. կվարց  |

59

**Գրել այն գետերի համարները, որոնք թափվում են Խաղաղ օվկիանոս.**

- |              |               |
|--------------|---------------|
| 1. Կոլումբիա | 5. Ռիո Գրանդե |
| 2. Ամուր     | 6. Միսիսիպի   |
| 3. Գանգես    | 7. Մեկոնգ     |
| 4. Յուկոն    | 8. Մուրեյ     |

60

**Գրել այն երկրների համարները, որոնց բնորոշ է «ժողովրդագրական ճգնաժամը».**

- |             |           |
|-------------|-----------|
| 1. Թուրքիա  | 5. Եմեն   |
| 2. ԱՄՆ      | 6. Իրան   |
| 3. Կանադա   | 7. Լատվիա |
| 4. Ուկրաինա | 8. Սիրիա  |

61

**Գրել Ախուրյանից սկիզբ առնող ջրանցքների համարները.**

- |                   |                    |
|-------------------|--------------------|
| 1. Կոտայքի        | 5. Ստորին Հրազդանի |
| 2. Արգնի-Շամիրամի | 6. Արաքսի          |
| 3. Արմավիրի       | 7. Շիրակի          |
| 4. Թալինի         | 8. Արտաշատի        |

62

**Տրված պետությունները դասավորել խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի նվազման կարգով.**

1. Արգենտինա
2. Չինաստան
3. Հնդկաստան
4. Բրազիլիա

63

**Հայկական լեռնաշխարհի տրված լճերի համարները դասավորել ըստ այն լեռների, որոնց վրա տեղակայված են այդ լճերը. Հայկական պար, Արագած, Գեղամա.**

1. Գայլատու
2. Ակնա
3. Քարի

64

Որոշել ավտոտրանսպորտով կատարվող ուղևորաշրջանառությունը, եթե երկրում տարեկան փոխադրվում է 4360 ուղևոր, իսկ փոխադրման միջին հեռավորությունը 12 կմ է:

(65-66) Լեռան զագաթին մթնոլորտային ճնշումը 400 մմ է, օդի ջերմաստիճանը՝  $-4^{\circ}$ , ստորոտին՝  $+10^{\circ}$  (հաշվարկը կատարել  $5^{\circ}$ -ով):

65

Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

66

Որոշել մթնոլորտային ճնշումը ստորոտին:



(67-68) Երկրի բնակչության թիվը 20 մլն է, քաղաքային բնակչության թիվը՝ 16 մլն, մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը՝ 300 000.

67 Որոշել ուրբանիզացման մակարդակը:

68 Որոշել ծնելիության գործակիցը (%):

**Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1. Վերընթաց գոտիականությունը թույլ է արտահայտված:
2. Կարսի սարահարթում օդի ջերմաստիճանը երբեմն կարող է իջնել  $-40^{\circ}\text{C}$ -ից ցած:
3. Տեղումների առավելագույն քանակը թափվում է Արևելապոնտական լեռների հյուսիսահայաց լանջերին՝ 2000–3000 մմ:
4. Տարվա տաք կեսին տիրապետում են արևադարձային օդային զանգվածները:
5. Գետերը հորդանում են առավելապես աշնանը:
6. Միջնաշխարհում տեղումների միջին տարեկան քանակը 800–1000 մմ է:

**ՀՀ տրանսպորտի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1. Ունի ներքին միասնական ավտոմոբիլային ճանապարհային ցանց:
2. Խճուղային ճանապարհային ցանցի խտությունը ցածրադիր, տնտեսապես զարգացած շրջաններում ավելի մեծ է, քան բարձրադիր լեռնային շրջաններում:
3. Գործող երկաթուղային գլխավոր մայրուղին (Այրում–Վանաձոր–Գյումրի–Մասիս–Երասխավան) ձգվում է միջօրեականի ուղղությամբ՝ հանրապետության կենտրոնական մասով:
4. Ի տարբերություն ընդարձակ տարածություններ ունեցող երկրների, բեռնաշրջանառության և ուղևորաշրջանառության աճը տեղի է ունեցել հիմնականում ոչ թե հեռավորությունների, այլ բեռների ծավալների և ուղևորների թվի աճի շնորհիվ:
5. Երկաթուղիների երկարությունը չորս անգամ գերազանցում է ավտոմոբիլային ճանապարհների երկարությանը:
6. Ռեզիլիենտային բարդ պայմանների պատճառով խողովակաշարային տրանսպորտը բացակայում է: